ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"8" նոյեմբերի 2012թ № 155- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002թ. հունիսի 13-ի «Քաղաքացիական ծառայողի ատեստավորում անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 18 «Ն» որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2003թ. սեպտեմբերի 1-ի «Քաղաքացիական ծառայության առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգը սահմանելու մասին» N 71 «Ն» որոշմամբ հաստատված աշխատակարգի պահանջներով, **ո ր ո շ ու մ եմ.**

1. Հաստատել ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առաջատար պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման հանձնաժողովի հետևյալ կազմը.

Թունյան Սուրեն	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ
Պողոսյան Ղուկաս	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի վերահսկողության և վերլուծության վարչության գլխավոր մասնագետ
Շահնազարյան Արամ	Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ
Միքայելյան Արա	Մարզպետարանի աշխատակազմի Գորիսի սոցիալական ծառայության տարածքային գործակալության պետ
Դավթյան Մարինե	<<Կապանի թիվ 6 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ տնօրեն
Ստեփանյան Զավեն	<<Կապանի թիվ 13 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ տնօրեն

2. Ատեստավորման հանձնաժողովի նախագահ նշանակել Սուրեն Թունյանին:

3. Ատեստավորման հանձնաժողովի քարտուղար նշանակել Արամ Շահնազարյանին:

4.Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել անհրաժեշտ աշխատանքային պայմաններ հանձնաժողովի գործունեությունն իրականացնելու համար:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ.նոյեմբերի 8
ք. Կապան